ՏԵՂԵԿԱՆՔ

«ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՎ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

Հոդված 13. ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ և ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Ձերբակալված կամ կալանավորված անձը, բացի Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված իրավունքներից, նաև իրավունք ունի՝

1) մայրենի կամ իրեն հասկանալի այլ լեզվով գրավոր և բանավոր տեղեկություններ ստանալու իր իրավունքների, ազատությունների և պարտականությունների, ձերբակալման կամ կալանավորման կատարման կարգի և պայմանների, դիմումներ և բողոքներ ներկայացնելու կարգի մասին, ինչպես նաև իր վերաբերյալ մշակված տեղեկատվությունն ստանալու, բացառությամբ օրենքով սահմանված գաղտնիք հանդիսացող տվյալների.

2) ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի կողմից իր նկատմամբ հարգալից վերաբերմունքի.

3) իր իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով, ինչպես անձամբ, այնպես էլ փաստաբանի, պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով դիմել ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին, նրանց վերադաս մարմիններին, դատարանին, դատախազությանը, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական միավորումներին և կուսակցություններին, զանգվածային լրատվության միջոցներին, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին կամ կազմակերպություններին.

4) առողջության պահպանման, այդ թվում՝ ստանալու բավարար սնունդ, բժշկական օգնություն, հոգեբանական, հոգեթերապևտիկ աջակցություն, սույն օրենքով նախատեսված դեպքերում ենթարկվելու բժշկական զննության, որին կարող է ներկա գտնվել նաև իր ընտրած բժիշկը, ինչպես նաև զննվելու իր ընտրած բժշկի կողմից իր դրամական միջոցների հաշվին.

5) սոցիալական ապահովության.

6) ստանալ իրավաբանական օգնություն.

7) անձնական անվտանգության ապահովման.

8) մտքի, խղճի և դավանանքի, քաղաքական կամ այլ հայացքների ազատության.

9) հաղորդակցվել արտաքին աշխարհի հետ.

10) հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի կամ մարմնամարզության և ութժամյա գիշերային քնի իրավունքը, որի ընթացքում արգելվում է նրան

ներգրավել դատավարական կամ այլ գործողությունների, բացառությամբ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերի.

11) կոչվել իր անվամբ կամ ազգանվամբ.

12) անձնական ընդունելության խնդրանքով դիմել ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի պետին, դրանց գործունեության նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմիններին.

13) իր մոտ ունենալ քրեական վարույթին կամ իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն առնչվող փաստաթղթեր և գրառումներ, բացառությամբ այն փաստաթղթերի և գրառումների, որոնք պարունակում են պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք.

14) մասնակցել քաղաքացիաիրավական գործարքների:

Կալանավորված անձը նաև իրավունք ունի՝

1) ստանալ կրթություն, զբաղվել ստեղծագործ աշխատանքով.

2) աշխատել.

3) կալանավորվածներին պահելու վայրի խանութից կամ կրպակից կամ վարչակազմի միջոցով ձեռք բերել սնունդ և առաջին անհրաժեշտության առարկաներ.

4) ստանալ և ուղարկել դրամական փոխանցումներ.

5) ստանալ նույնականացման քարտ՝ «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Ձերբակալված կամ կալանավորված անձին վերապահվում են նաև օրենքով սահմանված այլ իրավունքներ:

Օտարերկրյա քաղաքացիություն ունեցող ձերբակալված կամ կալանավորված անձինք իրավունք ունեն կապեր հաստատելու և պահպանելու Հայաստանի Հանրապետությունում իրենց պետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հաստատության հետ: Այն ձերբակալված կամ կալանավորված անձինք, ովքեր Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հաստատություն չունեցող երկրի քաղաքացի են, ինչպես նաև փախստականները կամ քաղաքացիություն չունեցող ձերբակալված կամ կալանավորված անձինք իրավունք ունեն կապեր հաստատելու և պահպանելու այն պետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հաստատության հետ, որը ստանձնել է այդ անձանց շահերի պաշտպանությունը կամ նրանց պաշտպանությամբ զբաղվող ցանկացած ազգային կամ միջազգային մարմնի հետ:

Օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող ձերբակալված կամ կալանավորված անձը «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում ապաստանի խնդրանք ներկայացնելու իրավունք ունի, որը համապատասխան վարչակազմի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ենթակա է

փոխանցման միգրացիայի հարցերով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնին:

Հոդված 15. ՊԱՇՏՊԱՆԻ, ՄԵՐՁԱՎՈՐ ԱԶԳԱԿԱՆՆԵՐԻ և ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ՏԵՍԱԿՑԵԼԸ

Ձերբակալված կամ կալանավորված անձն ունի իր պաշտպանի հետ խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցելու իրավունք՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման, անկախ աշխատանքային օրերից կամ ժամերից, բացառությամբ իր մասնակցությամբ վարութային գործողություններ կատարելու դեպքերի:

Կալանավորված անձի միջնորդության հիման վրա քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ նրան թույլատրվում են նաև խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցություններ քրեական վարույթով պաշտպան չհանդիսացող փաստաբանի հետ՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման (բացառությամբ նրա մասնակցությամբ վարութային գործողություններ կատարելու դեպքերի), եթե դա պայմանավորված է կալանավորված անձին քրեական վարույթի հետ չկապված իրավաբանական օգնություն ցույց տալու անհրաժեշտությամբ: Քրեական վարույթն իրականացնող մարմնի նշած միջնորդության քննարկումը և լուծումը, ինչպես նաև կալանավորված անձի՝ դրա կապակցությամբ կայացրած որոշման բողոքարկումն իրականացվում են Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Ձերբակալված կամ կալանավորված անձի տեսակցությունը պաշտպանի հետ տրամադրվում է Քրեական դատավարության օրենսգրքի 45-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված փաստաթղթերի, իսկ փաստաբանի հետ՝ նրա անձը հաստատող փաստաթղթի, փաստաբան լինելու հանգամանքը հավաստող փաստաթղթի, ինչպես նաև կալանավորված անձի համապատասխան միջնորդությունը բավարարելու մասին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա:

Եթե առկա է ձերբակալված անձի մասնակցությամբ վարութային գործողություններ կատարելու անհրաժեշտություն, ապա պաշտպանի հետ նրա տեսակցության տևողությունը կարող է սահմանափակվել Քրեական դատավարության օրենսգրքի 222-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված կարգով:

Եթե ձերբակալված կամ կալանավորված նույն անձի հետ տեսակցության համար ներկայացել է մի քանի փաստաբան կամ պաշտպան, ապա ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրի պետի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի պատճառաբանված գրավոր որոշմամբ, ելնելով այդ վայրի անվտանգության և բնականոն աշխատանքի ապահովման անհրաժեշտությունից, ձերբակալված կամ կալանավորված անձի հետ

միաժամանակյա տեսակցության հնարավորություն կարող է տրվել ոչ բոլոր փաստաբաններին կամ պաշտպաններին՝ այդ որոշման պատճենը տրամադրելով ձերբակալված կամ կալանավորված անձին, ինչպես նաև տեսակցության եկած փաստաբաններին կամ պաշտպաններին: Այս դեպքում ձերբակալված կամ կալանավորված անձն ինքն է ընտրում այն փաստաբաններին կամ պաշտպաններին, որոնց հետ պետք է տեսակցի:

Ձերբակալված և կալանավորված անձանց տեսակցությունը փաստաբանի կամ պաշտպանի հետ տրամադրվում է այնպիսի պայմաններում, որոնցում ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի ծառայողները նրանց կարողանան տեսնել, բայց չկարողանան լսել:

~~Ձերբակալված կամ կալանավորված անձը, իսկ ձերբակալված կամ կալանավորված անձի համաձայնության դեպքում նաև նրա պաշտպանն իրավունք ունեն պահանջելու անցկացնել բժշկական զննում:~~

Ձերբակալված և կալանավորված անձանց տեսակցությունը օրինական ներկայացուցչի, մերձավոր ազգականների, իսկ կալանավորված անձանց՝ նաև զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ, տրամադրվում է ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի պետի որոշմամբ: Ձերբակալված օտարերկրյա քաղաքացուն և քաղաքացիություն չունեցող անձին տեսակցություն տրամադրվում է նաև վերջինիս քաղաքացիության կամ մշտական բնակության պետության իրավասու ներկայացուցչի հետ՝ Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում: Ձերբակալված անձանց չի տրամադրվում տեսակցություն զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Ձերբակալված անձանց տեսակցությունը օրինական ներկայացուցչի, մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, կարող է սահմանափակվել հսկող դատախազի կողմից հաստատված՝ քննիչի որոշմամբ, եթե առկա են հիմնավոր պատճառներ, որ այդ իրավունքի իրականացումը կարող է խոչընդոտել ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կանխումը կամ խափանումը կամ հանգեցնել ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման համար անհրաժեշտ ապացույցների ոչնչացման կամ վնասման: Այդ մասին քրեական վարույթն իրականացնող մարմինը գրավոր իրազեկում է ձերբակալված անձին, ինչպես նաև ձերբակալվածներին պահելու վայրի վարչակազմին: Կալանավորված անձանց տեսակցությունը օրինական ներկայացուցչի, մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, կարող է սահմանափակվել միայն Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կայացված դատարանի որոշմամբ, որի մասին քրեական վարույթն իրականացնող մարմինը գրավոր իրազեկում է կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին: Ձերբակալված օտարերկրյա քաղաքացուն և քաղաքացիություն չունեցող անձին տեսակցություն տրամադրվում է նաև վերջինիս քաղաքացիության կամ

մշտական բնակության պետության իրավասու ներկայացուցչի հետ՝ Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում:

Մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների կամ այլ անձանց հետ տեսակցությունն անցկացվում է ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի ծառայողների հսկողությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Այդ անձանց կողմից ձերբակալված կամ կալանավորված անձանց արգելված առարկաներ, քրեական վարույթի իրականացումը խոչընդոտող կամ նոր հանցագործության կատարմանը նպաստող նյութեր, տեղեկություններ փոխանցելը կամ փոխանցելու փորձը կարող է հանգեցնել տեսակցության վաղաժամկետ դադարեցման:

Ձերբակալված անձին մերձավոր ազգականների հետ տրամադրվում է առնվազն մեկ տեսակցություն՝ մինչև մեկ ժամ տևողությամբ:

Կալանավորված անձին մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների կամ այլ անձանց հետ ամսվա ընթացքում տրամադրվում է առնվազն երկու կարճատև տեսակցություն՝ մինչև երեք ժամ տևողությամբ:

Շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդություններով տառապող ձերբակալված կամ կալանավորված անձանց տեսակցությունը տեսակցողի հետ տրամադրվում է այնպիսի հատուկ պայմաններում, որոնք բացառում են տեսակցողի վարակումը:

Միայն մերձավոր ազգականների հետ երկարատև տեսակցություն տրամադրվում է երկու ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ՝ մինչև երեք օր տևողությամբ: Երկարատև տեսակցություն տրամադրվում է նաև կալանավորված անձի հետ ամուսնության մեջ չգտնվող այն անձի հետ, որի հետ կալանավորված անձն ունի համատեղ երեխա: Կալանավորված անձի խնդրանքով երկարատև տեսակցությունը կարող է փոխարինվել կարճատև տեսակցությամբ: Կարճատև և երկարատև տեսակցություններ տրամադրելու կարգը սահմանվում է ներքին կանոնակարգով:

Հոդված 21. ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ և ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԲՈՒԺՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆՁՆԱԿԱՆ ՀԻԳԻԵՆԱՆ

Ձերբակալված և կալանավորված անձանց բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտը կարգավորող օրենսդրությանը համապատասխան: Ձերբակալված և կալանավորված անձանց բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ

նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ձերբակալվածներին պահելու վայրի և կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմերն ապահովում են ձերբակալված կամ կալանավորված անձանց առողջության պահպանմանն ուղղված սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային պահանջների կատարումը:

Կալանավորվածներին պահելու վայրում պետք է աշխատի ընդհանուր մասնագիտացում ունեցող առնվազն մեկ բժիշկ:

Մասնագիտացված բուժօգնության կարիք ունեցող ձերբակալված կամ կալանավորված անձը փոխադրվում է հատուկ մասնագիտացված կամ քաղաքացիական բուժհաստատություն: Ձերբակալված և կալանավորված անձանց բժշկական, այդ թվում՝ հոգեբուժական օգնություն ցույց տալու, նրանց բուժհաստատություններում պահելու, ինչպես նաև բուժսպասարկման գործում այդ հաստատությունների աշխատողներին ներգրավելու կարգը սահմանում է լիազորված մարմինը:

~~Ձերբակալված կամ կալանավորված անձի մոտ մարմնական վնասվածք հայտնաբերելու դեպքում ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի բուժաշխատողը կամ հրավիրված բուժաշխատողն անհապաղ կատարում է բուժզննություն, որին կարող է մասնակցել ձերբակալված կամ կալանավորված անձի ընտրած բժիշկը: Բժշկական զննությունը իրականացվում է ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի ծառայողի լսողության, իսկ մինչև բժշկի կողմից հակառակը չպահանջելը՝ նաև տեսողության սահմաններից դուրս: Բուժզննության արդյունքները սահմանված կարգով գրանցվում են անձնական գործում, և այդ մասին իրազեկում են հիվանդին, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմնին:~~

Ձերբակալված կամ կալանավորված անձը ենթարկվում է բժշկական զննության՝

1) ձերբակալվածներին պահելու վայր կամ կալանավորվածներին պահելու վայր ընդունվելիս.

2) ձերբակալված կամ կալանավորված անձի՝ առողջական վիճակի վերաբերյալ գանգատի դեպքում.

3) ձերբակալված կամ կալանավորված անձի, իսկ նրա համաձայնության դեպքում՝ նրա պաշտպանի պահանջով.

4) ձերբակալված կամ կալանավորված անձի մոտ մարմնական վնասվածք հայտնաբերելու դեպքում:

Բժշկական զննությանը կարող է ներկա գտնվել նաև ձերբակալված կամ կալանավորված անձի ընտրած բժիշկը: Սույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով նախատեսված դեպքում ձերբակալված կամ կալանավորված անձի ընտրած բժիշկը կարող է ներկա գտնվել բժշկական զննությանը, եթե՝

1) ձերբակալվածներին պահելու վայր է ներկայացել ձերբակալված անձին ձերբակալվածներին պահելու վայր բերելու պահից 3 ժամվա ընթացքում.

2) կալանավորվածներին պահելու վայր է ներկայացել կալանավորված անձին կարանտինային բաժանմունք տեղափոխելու պահից 24 ժամվա ընթացքում:

Բժշկական զննությունն իրականացվում է՝

1) ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի ծառայողի լսելիության, և եթե բժշկական զննությունն իրականացնող բժիշկն իր կյանքին կամ առողջությանը սպառնացող վտանգը կանխելու նպատակով հակառակը չի պահանջում, ապա նաև՝ տեսանելիության սահմաններից դուրս.

2) անհատական սկզբունքով՝ առանձին:

Բժշկական զննության արդյունքները գրանցվում են՝

1) ձերբակալված անձի դեպքում՝ դրա համար նախատեսված գրանցամատյանում և անձնական գործում.

2) կալանավորված անձի դեպքում՝ նրա ամբուլատոր բժշկական քարտում և կալանավորվածներին պահելու վայր ընդունվածների բժշկական զննության մատյանում:

Բժշկական զննության ենթարկված ձերբակալված կամ կալանավորված անձը իրազեկվում է բժշկական զննության արդյունքների մասին:

Սույն օրենքի 21.1-ին հոդվածով նախատեսված դեպքում բժշկական զննության արդյունքները գրանցվում են նաև խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական զննության արձանագրության ձևաթղթում: Բժշկական զննության արձանագրության ձևաթղթի ձևը և դրա լրացման կարգը հաստատում է առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը:

Մարմնական վնասվածք հայտնաբերելու դեպքում, եթե առկա չեն սույն օրենքի 21.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը, ձերբակալված կամ կալանավորված անձի բժշկական զննությունն իրականացրած բուժաշխատողը բժշկական զննության արդյունքների մասին 24 ժամվա ընթացքում, հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային եղանակով, իրազեկում է իրավասու քննչական մարմնին և դատախազությանը:

Ձերբակալված կամ կալանավորված անձի ծանր հիվանդության կամ մահվան դեպքում ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմն այդ մասին անհապաղ տեղեկացնում է ձերբակալված կամ կալանավորված անձի մերձավոր ազգականներին, քրեական վարույթն իրականացնող մարմնին և հսկողություն իրականացնող դատախազին:

Օտարերկրյա քաղաքացիություն ունեցող ձերբակալված կամ կալանավորված անձի ծանր հիվանդության կամ մահվան դեպքում համապատասխան հիմնարկի վարչակազմն այդ մասին անհապաղ հայտնում է վերադաս մարմնին, որն էլ տեղեկացնում է շահագրգիռ գերատեսչություններին, այդ թվում՝ համապատասխան պետության դիվանագիտական ներկայացուցչությանը կամ հյուպատոսական հիմնարկին:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված գործողությունները կատարելուց հետո աճյունը հանձնվում է այն պահանջող անձին՝ նախապատվությունը տալով մերձավոր ազգականներին: Եթե աճյունը

երեք օրվա ընթացքում չի պահանջվել, հուղարկավորությունը կատարվում է պետության հաշվին:

Ձերբակալված կամ կալանավորված անձի մոտ ծանր հիվանդություն հայտնաբերելու դեպքում, որը կարող է հանգեցնել նրա հոգեկան խանգարման կամ մահվան, համապատասխան հիմնարկի պետը բժշկական եզրակացության հիման վրա միջնորդում է քրեական վարույթն իրականացնող մարմնին և հսկողություն իրականացնող դատախազին՝ հարկադրանքի միջոցը վերացնելու կամ փոխելու վերաբերյալ:

Ձերբակալված կամ կալանավորված անձը պետք է հնարավորություն ունենա մարդկային արժանապատվությունը չնվաստացնող պայմաններում բավարարել իր սանիտարահիգիենիկ պահանջները: Նրա անձնական հիգիենայի պահպանման պայմանները և կանոնները սահմանվում են ներքին կանոնակարգով:

Արգելվում է ձերբակալված կամ կալանավորված անձին ենթարկել որևէ բժշկական կամ գիտական փորձի՝ անկախ վերջինիս համաձայնության:

Քրեակատարողական հիմնարկներում կալանավորված անձանց հիվանդության հետևանքով կալանավորումից ազատելու, անմեղսունակ կամ սահմանափակ մեղսունակ ճանաչելու, ինչպես նաև բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու հետ կապված հարցերը կանոնակարգելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատվում են միջգերատեսչական բժշկական հանձնաժողովներ ստեղծելու կարգը և կազմը:

Կալանավորման կատարումը խոչընդոտող հիվանդությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 21.1. Խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական զննության արձանագրումը

1. Խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական զննության արձանագրությունը կազմվում է, եթե՝

1) առկա է ձերբակալված կամ կալանավորված անձի գրավոր կամ բանավոր հայտարարությունը՝ մարմնական վնասվածքը կամ առողջական վիճակի վերաբերյալ գանգատը խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ դրսևորման հետևանք լինելու վերաբերյալ.

2) բուժաշխատողը հայտնաբերում է, որ ձերբակալված կամ կալանավորված անձի մարմնական վնասվածքը կամ առողջական վիճակի վերաբերյալ գանգատը կարող է լինել խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի հետևանք.

3) ձերբակալվածների պահման վայրի կամ կալանավորվածների պահման վայրի վարչակազմի ծառայողը բուժաշխատողին հայտնում է խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի ենթադրյալ դեպքի մասին:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված բժշկական զննության արձանագրությունը ստորագրվում է բժշկական զննությունն իրականացրած բուժաշխատողի և բժշկական զննության ենթարկված ձերբակալված կամ կալանավորված անձի կողմից: Եթե բժշկական զննությանը ներկա է գտնվել ձերբակալված կամ կալանավորված անձի ընտրած բժիշկը, ապա արձանագրությունը ստորագրվում է նաև նրա կողմից: Ձերբակալված կամ կալանավորված անձի կամ բժշկական զննությանը ներկա գտնված՝ նրա ընտրած բժշկի կողմից արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու դեպքում արձանագրության մեջ նշվում է այդ փաստը:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում բժշկական զննությունն իրականացրած բուժաշխատողը պարտավոր է՝

1) արձանագրության պատճենն արձանագրությունը կազմելուց հետո անհապաղ տրամադրել ձերբակալված կամ կալանավորված անձին.

2) ձերբակալված կամ կալանավորված անձին տեղեկացնել իր միջոցների հաշվին մասնագիտական երկրորդ կամ իր նախընտրած թվով այլ կարծիք ստանալու իր իրավունքի մասին.

3) անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում արձանագրությունը կազմելու, իսկ հայտնի լինելու դեպքում՝ նաև խոշտանգում կամ վատ վերաբերմունքի այլ ձևեր ենթադրաբար կիրառած աշխատակցի կամ այլ ձերբակալված կամ կալանավորված անձի ինքնության վերաբերյալ հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային եղանակով իրազեկել ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրի պետին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված միջոցները ձեռնարկելու համար:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում՝

1) կալանավորված անձի բժշկական զննությունն իրականացրած բուժաշխատողը պարտավոր է անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային եղանակով, արձանագրությունն ուղարկել իրավասու քննչական մարմին, իսկ արձանագրության պատճենը, հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային եղանակով՝ դատախազություն.

2) ձերբակալված անձի բժշկական զննությունն իրականացրած բուժաշխատողը պարտավոր է անհապաղ, հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային եղանակով, արձանագրությունը տրամադրել շտապ բժշկական օգնության ծառայության կայանի օպերատիվ աշխատանքները կազմակերպող տվյալ օրվա պատասխանատուին, որը պարտավոր է անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում արձանագրությունը և շտապ բժշկական օգնության կանչի թերթիկը, հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային եղանակով, ուղարկել իրավասու քննչական մարմին, իսկ դրանց պատճենները, հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային եղանակով՝ դատախազություն:

5. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված զննության արձանագրության հիման վրա ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրի պետը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը ձեռնարկում է անհրաժեշտ գործողություններ՝ ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերի ենթարկված ձերբակալված կամ կալանավորված անձի շփումը ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի՝ խոշտանգում կամ վատ վերաբերմունքի այլ ձևեր ենթադրաբար կիրառած աշխատակցի կամ այլ ձերբակալված կամ կալանավորված անձանց հետ բացառելու նպատակով:

Հոդված 29. ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԻՆ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾՆԵՐԻՆ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐ և ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԻՆ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾՆԵՐԻՆ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐ ԸՆԴՈՒՆԵԼԸ

Ձերբակալված անձին ձերբակալվածներին պահելու վայր, իսկ կալանավորված անձին կալանավորվածներին պահելու վայր ընդունում է տվյալ հիմնարկի վարչակազմը՝ ներքին կանոնակարգով սահմանված կարգով:

Կալանավորվածներին պահելու վայր փոխադրված անձը բժշկական զննություն անցնելու և կալանավորվածներին պահելու վայրի պայմաններին ծանոթանալու նպատակով մինչև յոթ օր ժամկետով տեղավորվում է կարանտինային բաժանմունքում, որտեղ նա գտնվում է կալանքի տակ պահելու համար սահմանված պայմաններում: Կալանավորված անձը ենթարկվում է բժշկական զննության կարանտինային բաժանմունք տեղավորվելուց հետո անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում: Կարանտինային բաժանմունքում կալանավորված անձին պահելու կարգը սահմանվում է ներքին կանոնակարգով:

Կալանավորվածներին պահելու վայր փոխադրված կալանավորված անձը կարանտինային բաժանմունքում տեղավորվելուց անմիջապես հետո տեղեկացվում է իր իրավունքներին և պարտականություններին, ներքին կանոնակարգին. այդ մասին տեղեկանքը կցվում է նրա անձնական գործին:

Ձերբակալված անձը ձերբակալվածներին պահելու վայր, իսկ կալանավորված անձը կալանավորվածներին պահելու վայր փոխադրվելուց անմիջապես հետո գրանցվում է դրա համար նախատեսված գրանցամատյաններում և անհատական քարտերում: Ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր անձի համար վարվում է անձնական գործ, որում պարտադիր կարգով պետք է ներառվեն ընդունելու և արգելանքից կամ կալանքից ազատելու տարեթվերն ու ամսաթվերը:

Ձերբակալված անձը ձերբակալվածներին պահելու վայր բերվելուց հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 3 ժամվա ընթացքում ենթարկվում է բժշկական զննության հրավիրված շտապ բժշկական օգնության ծառայության բուժաշխատողի կողմից: